ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
Կ Ա Ր Գ Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

2014թ. փետրվարի 6 թիվ 10 - Ա

ՎԱԶԻՐ ԱՎԴԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109–րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,111-րդ հոդվածի 2-րդ մասով, 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ալագյազի Շաքրո Մհոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի թափուր պաշտոնի համար 2014 թվականի հունվարի 23-ին անցկացված մրցույթի արդյունքների և Վ. Ավդալյանի անձնական դիմումը՝ ***կարգադրում եմ.***

2014 թվականի փետրվարի 6-ից Վազիր Շաքրոյի Ավդալյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի <<Ալագյազի Շաքրո Մհոյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնում նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ լուծելով 2013 թվականի նոյեմբերի 7-ին նրա հետ կնքված ժամկետային աշխատանքային պայմանագիրը:

Ս. ՍԱՀԱԿՅԱՆ